

ԿՅԱՆՔԻ ԳԻՐԸ
(«ՈՒՍՍԱ ԿԱՐՈ» ՎԵՊԻ ՍՏԵՂԵԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Ավետիք Իսահակյանը «Ուստա Կարո» վեպը ձեռնամուխ է եղել գրել «Աբու Լալա Մահարի» պոեմն ավարտելուց անմիջապես հետո: Եվ ինչպես «Աբու Լալա Մահարի» պոեմի, այնպես և «Ուստա Կարո» վեպի ստեղծման աշխատանքներն սկսվել են Ղազարապատ գյուղում: Մեզ է հասել վեպի առաջին տարբերակի ձեռագիրը՝ 356 մեծադիր էջ: Բնագրի առաջին անվանաթերթային էջը ընդարձակ տեղեկություն է տալիս Իսահակյանի նոր, մեծ մտահղացման վերաբերյալ: Ձեռագրի վերին մասում գերմաներեն գրված է՝ «Meister Karo» Ein humoristischer Roman aus dem armenischen Volks leben («Ուստա Կարո». երգիծական վեպ հայ ժողովրդի կյանքից): Եվ ապա՝ «Ուստա Կարո և Օրթե Հարութ». վեպ: Առաջին տարբերակն ուներ բնաբան, որը, սակայն, Իսահակյանի ձեռքով ջնջված է. ահա այն. «En France, tout le monde est un peu de Tartaren». A. Doude. («Ֆրանսիայում բոլորի մեջ փոքր-ինչ Տարտարեն կա»), «Ամեն մի հայ փոքր-ինչ Ուստա Կարո է»:

Ապա կրկին գերմաներեն՝ Von Avedik Issahakian. Geschreiben Fruhjahr S. 1910 in Kazarapat bei Alexandropol («Գրված է 1910 թվի գարնանը, Ղազարապատ՝ Ալեքսանդրապոլի շրջակայքում»): Անվանաթերթին նշված է նաև վեպի գրելու սկզբնական տարեթիվն ու վայրը՝ 21 ապրիլի. 1910 թ. Ղազարապատ:

Բանաստեղծի կողմից առաջին հիշատակումը, որ ինքը սկսել է մի նոր գործ գրել, Վիկտորյա Աբովյանին (Խ. Աբովյանի թոռնուհուն) գրած (1910 թ. մայիս 2, Ղազարապատ) նամակի հետևյալ հատվածն է. «...ամբողջ օրը պարապում եմ. օրական 14 ժամ սեղանիս առաջն եմ - գրում եմ, գրում եմ, գրում եմ, իսկի չեմ կարդում. սկսել եմ մի մեծ վեպ, որ հավատացնում եմ, հանճարեղ բան է. մինչև այժմ այդպես բան չեմ գրել, և ոչ մի մարդ չէ գրել. չասես՝ պարծենկոտ Ավետիք. - ո՛չ - ճիշտն եմ ասում. «Աբով-Մահարին» նրա մի գլուխը չարժե... Մինչև մայիսի վերջը կլինի բոլորովին պատրաստ... Ծա՛տ ջղային եմ, քուն չունեմ. գրում եմ շա՛տ տենդոտ, հագիվ զսպում եմ ձեռքս, որ չվազե...» (VI, 95-96):

Այսպես է սկսվում պատմությունը հայ գրականության ամենախորհրդավոր վեպերից մեկի՝ «Ուստա Կարոյի»: Այո՛, նման բան նա չէր գրել, սա պիտի լիներ բանաստեղծի հեղինակած առաջին և վերջին վեպը և սիրած գործը, որը նա համեմատում է անգամ «Աբու Լալա Մահարու» հետ և դեռ առավելությունը տալիս վեպին: Այսպես արտահայտվում են միայն սիրած առարկայի վերաբերյալ:

Ողջ 1910 թվականը և մասամբ էլ մինչև 1911-ի ամառը՝ մինչև Կովկասից Թուրքիա անլեզալ մեկնումը, Իսահակյանը արդյունավետ աշխատում է վեպի շուրջ։ Եվ կրկին ու կրկին գրում է նա իր համար թանկագին մարդուն՝ Վիկտորյա Աբովյանին. «...Կյանքս անցնում է ամբողջապես աշխատանքի մեջ. օրը 15 ժամ սեղանինս առաջ եմ և գրում եմ, իսկի մի տող էլ չեմ կարդում. վեպս լավ առաջ է գնում. երևում է, որ 500 երեսի կհասնի, չեմ ուզում մեծ լինի, բայց հմար չկա. մեծ պլանով եմ սկսել, թեև նկատում եմ, որ ոչ մի ծանոթալի տեղ չկա. ամեն երեսն էլ կարդացվում է հետաքրքրությամբ» (1910, մայիսի 5, Ղազարապատ, VI, 97), «Գալով ինձ՝ իմ մխիթարությունը էլի մնում է «Ուստա Կարոն», որ հաջող կերպով հառաջ է գնում, տեսներնք ի՞նչ դուրս կգա» (VI, 98)։

Աշխատանքն առավել արդյունավետ էր գնում Ղազարապատում, բայց չնոռանանք, որ այդ շրջանում ընթանում էր կայսերական Արդարադատության նախարարության կողմից հրահրված «Դաշնակցության գործ» հայտնի դատական գործընթացը թվով 160 հայ մտավորականների դեմ, որոնց թվում էին Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Ավ. Մխարոնյանը և ուրիշներ։ Եվ նույն այդ շրջանում Իսահակյանը ամուսնանում է ու հիմնականում ապրում Թիֆլիսում։ Եվ ահա առաջին զանգատները վեպի կապակցությամբ՝ կրկին գրված Վիկտորյա Աբովյանին (1910, հոկտեմբերի 1, Թիֆլիս)։ «Այստեղ օրերս լավ չեմ անցնում, պարապ եմ, չեմ կարող «Ուստա Կարոն» գրել, ամփոփել, ամբողջ օրը թափառում եմ, և սրա-նրա մոտ քաշ տալիս. միայն գիշերներն եմ տուն գալիս» (1911, հունիսի 5, Թիֆլիս, VI, 99)։ «Անցյալ տարի հազար անգամ բախտավոր էի, քան այս տարի, գրեմ հերոս «Ուստա Կարոն» էի գրում. այս տարի - ոչինչ» (VI, 105)։

Բնական է, որ նման ծավալի, նման ընդգրկումի վեպը պահանջում էր հոգեկան հանգստություն, մի կայուն նստատեղ, անվտուղ մթնոլորտ, իսկ որտեղի՞ց գտներ այդ ամենը Իսահակյանը։ Հիշենք, որ այդ այն շրջանն էր, երբ դրդված մոտակա մեծ դատական պրոցեսից և սիբիրյան սպասվող աքսորից՝ Իսահակյանը պատրաստվում էր դուրս գալ երկրից, հեռանալ իր համար այնքա՛ն նվիրական վայրերից, տնից, շրջապատից։ Եվ հիշենք, որ նոր էր ծնվել նրա միակ զավակը։

Նա անդրադառնում է վեպին Թուրքիայում՝ 1911 թվի աշնանը, երբ շուրջ մեկ տարի ապրում է Կ. Պոլսում, նրա շրջակայքի Իշխանաց (Պրինկիպո) կղզիներում և ծովափնյա Իզմիր քաղաքում։ Այստեղ Իսահակյանը որոշում է ավարտել վեպը մինչև Եվրոպա մեկնելը։ Այս մասին մենք կարդում ենք Վ. Աբովյանին գրած նամակում (1911, նոյեմբերի 24, Կ. Պոլիս)։ «Մոտ օրերս գնում եմ անպատճառ մոտակա մի գյուղաքաղաք, ուր կա հայկական մի նշանավոր գիտական-վանք (նկատի ունի Իզմիրը - Ա. Ի.), մի ամիս կամ գուցե 2 ամիս պիտի մնամ և վերջնականապես «Ուստա Կարոն» ավարտեմ. այստեղ՝ Պոլսում, չի կարելի մեծ աշխատանքներ անել...

«Ուստա Կարոն» վերջացնելուց հետո կամ պիտի գնամ արտասահման՝ Վիեննա... կամ արևելք՝ ուղևորությամբ: «Ուստա Կարոն», ինչպես երևում է, շատ լավ բան է դուքս զալու. այս 4 ամիսը, ճամապարհին և այստեղ, բավական մշակեցի և խորհեցի» (VI, 112-113):

Եվ ավարտում է Իսահակյանը «Ուստա Կարոն» (որը մենք հետագայում կանվանենք վեպի առաջին տարբերակ) Իզմիթում 1912 թ. հունվարի 19-ին (վեպի բնագրի վերջին էջի վրա են դրված այդ տվյալները): Այդ մասին է նա գրում նաև իր կյանքի առեղծված-կանանցից մեկին՝ Վիկտորյա Աբովյանին (1912, ապրիլի 24, Պրիմկիպո). «Ձմեռս մի-երկու ամսով Պոլսից հեռու ապրեցա Իզմիթ քաղաքում (ուր գնացել էի առանձին աշխատելու և համարյա վերջացրի «Ուստա Կարոն»):

...«Ուստա Կարոն» վերջացած է, բայց մի 2-3 ամսվա աշխատանք է պետք, որ լեզուն ուղղեն, հոկեն, կոկեն, երբ որ ձեռքս մի քիչ փող անցնի, որ մի քանի ամիս ապահով լինեն, «Ուստա Կարոն» լույս աշխարհ կելնի» (VI, 115, 117):

Այսպիսով՝ վեպի վրա Իսահակյանը աշխատանքներն սկսել է 1910 թվի ապրիլին՝ Ղազարապատում, շարունակել մինչև տարեվերջ և 1911-ի նոյեմբեր-դեկտեմբերը, իսկ 1912 թ. հունվարի 19-ին վեպն ավարտված էր:

Երբ Իսահակյանը 1912 թվի հուլիսի 5-ին Կ. Պոլսից մեկնում է Վիեննա, ձեռքին լինում է ընդամենը մի փոքրիկ ուղևորական ճամպուրկ, սակայն մեջը բանաստեղծի համար երկու անգին մասունք՝ մեկը «Աբու Լալա Մահարի» պոեմի բնագիրը և նրա առաջին հրատարակությունը, մյուսը՝ «Ուստա Կարոն» վեպի առաջին տարբերակի ավարտված ձեռագիրը՝ 356 մեծադիր էջ: Ինչպես որ ինքը գրել է իր մտերիմ ընկեր Գարեգին Լևոնյանին (1913 թ. ապրիլի 23, Ժնև), «...«Ուստա Կարոն»... համարյա անմշակ ընկած է պորտֆելիս մեջ, և չեմ ձեռք զարկում մշակելու» (VI, 127):

Այնժամ արդեն նա սկսել էր գիտակցել, որ թեպետ վեպի նախնական տարբերակը ավարտվեց, սակայն դրանով իսկ չեզոքակվեց իր ասելիքը, քանզի այդ ժամանակահատվածում «Հայկական հարցը» ոչ թե հանգուցալուծվեց, այլ ավելի նոր ու բարդ աստիճանի հասավ: Իսկ «Ուստա Կարոն» ոչ այլ ինչ էր, եթե ոչ «Հայկական հարցի» գեղարվեստական վերապատման փորձ՝ դասական վեպի արտահայտչաձևերով: Ըստ Իսահակյանի մտահղացման՝ «Ուստա Կարոն» պիտի լիներ 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբների հայ ժողովրդի քաղաքական կյանքի համայնապատկերը, որն իր մեջ պիտի պարփակեր հայ առաջին ֆիդայական խմբերի պայքարը, առաջին հայ քաղաքական կուսակցությունների ծագումը, նրանց գործունեությունն ու ծրագրերը, Արևմտյան Հայաստանում համաժողովրդական զինյալ ապստամբության կազմավորումը, հայդուկային կոիվների դրվագներ և այլն: Վեպը պիտի պատկերեր նաև Արևելյան Հայաստանի քաղաքական վիճակը, կայսերական Ռուսաստանի հրահ-

րած հալածանքները հայ հայրենասիրական ուժերի հանդեպ, կամավորական շարժման կազմակերպումն ու երկրում ընթացող ազատագրական պայքարի առօրյան:

Ի վերջո, Իսահակյանի ծրագրածը շատ ավելին էր, քան առաջին տարբերակում գրածը: Եվ եթե Իսահակյանը առաջին տարբերակը (իսկ այն հիմնականում ավարտված էր) լույս աշխարհի չհանեց, կնշանակի՝ նրա մտահղացումներում վեպը պետք է դուրս գար արվածի-գրվածի սահմաններից, վերանշակվեր ու շարունակվեր: Նա իրոք պիտի դառնար «հայկական հարցի» յուրովի ուղեկիցը և բանաստեղծի խոհերի, հայացքների մեկնաբանը: Եվ ժամանակը, և՛ քաղաքական իրադարձությունները, արհավիրքներն ու փոթորկումները թույլ չտվեցին 1912-1914 թթ. դնելու վեպի վերջակետը: Իսկ 1915 թվականից հետո Իսահակյանին պարզ դարձավ, որ նպատակահարմար չէր վեպը այդ վիճակով տպագրության հանձնելը: Պատմությունը բանաստեղծի առաջ նոր հիմնահարցեր էր դնում և պահանջում նրանց լուծումը: Այն օրվանից, երբ Իսահակյանը վճռեց «Ուստա Կարոն» դարձնել «հայկական հարցի» յուրովի մեկնաբանը, վեպը վեր ելավ դասական վեպի ավանդական շրջանակներից ու մտավ մի այլ ոլորտ՝ կախյալ ոչ միայն հեղինակի կամքից, այլև քաղաքական իրավիճակից, պատմության անմեկնելի իրադարձություններից: Եվ այս բնույթի վեպի ավարտն ավելի շատ ոչ թե գեղարվեստական-ստեղծագործական խնդիր էր, այլ քաղաքական, պատմական: Հետագայում Իսահակյանը հաճախ ասում էր. «...«Ուստա Կարոն» կավարտվի այնժամ, երբ իր լուծումը կգտնի «հայկական հարցը»:

Այնպես որ արդեն 1913 թվի գարնանը Իսահակյանը որոշում է ընդունում հիմնավորապես վերանայել-վերակառուցել վեպը և սկսում է աշխատանքը վեպի նոր՝ երկրորդ տարբերակի շուրջ. այդ մասին նա գրում է Գաբեգին Լևոնյանին (1913, մայիսի 30, Կոլտնոժ). «Ուստա Կարոն» երկու-շաբթի օրվանից սկսում եմ ամբողջը նորից գրել, մշակել. և չգիտեմ - քեզ երբ հարկավոր կլինի, որ մի գլուխ, մի լավ գլուխ հասցնեմ... Շատ ծանր աշխատանք է այդ «Ուստա Կարոն»։ 500 էրես նորից գրել, անթիվ նյութերս նորից քրքրել, տող-տող սրբագրել, ուղղել, հղկել, մշակել» (VI, 129):

Եվ սակայն մի տևական ժամանակով նա չի անդրադառնում վեպին: Հիմնական պատճառը, ինչպես ասացինք, քաղաքական իրավիճակն էր և մեր ժողովրդի կրած մեծագույն ողբերգությունը՝ 1915-1918 թթ. եղեռնը: Ստեղծված իրավիճակում «Ուստա Կարոն» պետք է հիմնովին վերանայվեր, ավելի ճիշտ՝ նորից գրվեր:

Իսահակյանը, ի տարբերություն հայ շատ քաղաքական գործիչների և գրողների, երբևիցե հույսեր չի տածել Թուրքիայի բարեփոխման կամ հայերի հանդեպ նրա վարած քաղաքականության բարելավման վերաբերյալ. տակավին 1905 թվին գրած «Մեր ճակատագիրը» արձակ բանաս-

տեղծությունում մա ասում է. «Հագար տարիներ և մինչև այսօր թաթարն է մատել մղձավանջի պես մեր կրծքի վրա, մեր շունչն է խըլել»: Եվ սակայն վեպի առաջին տարբերակում մա կանխատեսել անգամ չէր կարող պատմական դեպքերի զարգացման մասն ընթացքը, այն, ինչ որ բերեց 1915 թիվը: Եվ, բնականաբար, Եղեռնից հետո «Ուստա Կարոն» գաղափարապես շրջադարձային վերափոխումներ պիտի կրեր: Այն, ինչ կատարվեց, վեր էր ամեն դժոխային պատկերացումներից: Այլև ոչ մի խոսք չէր կարող լինել հայի և թուրքի խաղաղ հարաստելու, դրկիցաբար, ամխոռվ ապրելու վերաբերյալ: Ուրեմն առաջին ծանրակշիռ ուղղումը վեպի հայեցակարգի մեջ մտցրեց Մեծ եղեռնը, հետո պիտի գար Հոկտեմբերյան հեղափոխությունը, առաջին Հայկական հանրապետությունը և մրա անկումը, Հայաստանի խորհրդայնացումը: Յուրաքանչյուրն այս վճռորոշ իրադարձություններից տակն ու վրա էին անում Իսահակյանի վեպի մախնական ծրագիրն ու կառույցը: Եվ բանաստեղծը, բնականաբար, տարիներ շարունակ ունեցավ երկար ու տառապազին խոհեր վեպի վերափոխման, վերակառուցման վերաբերյալ:

Վարդգես Ահարոնյանին գրած մամակում Իսահակյանը խոստովանում է (1924, փետրվարի 21, Վենետիկ). «...այս վեպը ուղղակի պատիժ դարձավ գլխիս. գրել էի, վերջացրել. նորից փոխում եմ, ոչ էապես, բայց շատ բաների մեջ. մի տեսակ վերագմահատում ի տես բոլոր սնանկությանց, որոնք եղան մեծ պատերազմի ընթացքին, և հետ-պատերազմի շրջանում - սնանկություն պետությունների, դեմոկրատիայի, սոցիալիզմի, կոմունիզմի, հումանիտեի և այլն - այն բոլոր ապրումները, որ ունեցա՝ պիտի բյուրեղանան Ուստա Կարոյի և Օրթե Հարութի մեջ. դա է վեպս, որ հիմքում փիլիսոփայական է և գերազանցապես ազգային-հայկական»¹:

Նոր լիցքով է անցնում Իսահակյանը վեպի հիմնական մշակման աշխատանքներին 1919 թվի մայիսի 1-ից Ժնևում, երբ մաքրագիր գրում է վեպի սկզբի տասը գլուխ՝ այս անգամ հրաժարվելով գլուխների առանձին վերնագրերից, մախընտրելով սոսկ տառերը՝ ալքրբենական հեթաակամությանը: Սակայն հետո կրկին գալիս է վերնագրերի տարբերակին:

Վեպի երկրորդ տարբերակը, ըստ Իսահակյանի ծրագրի, պիտի կազմեր հիսուներկու գլուխ՝ «...«Ուստա Կարո» վեպը բաժանվում է չորս գրքերի.- գրում է Իսահակյանը.-

Ա. գիրք. Սկզբից մինչև Նախնվանում առաջին անգամ Կայծակի երևալը:

Բ. գիրք. Սկսած Կայծակի հոգեհանգստի ճառից և ժողովից Անի երթը:

Գ. գիրք. Սկսած Անի երթալուց մինչև Բագրամի ուխտը:

Դ. գիրք. Բագրամի ուխտից մինչև վերջը»:

Գրականագիտության մեջ և Իսահակյանի շրջապատում տարածված էր կարծիք, որ Իսահակյանը գրում է հայկական յուրովի «Դոն Զիշո-

տը», և նա չի մերժում այդ տեսակետը: Իհարկե, մամուլային զուտ պայմանական է, բայց և այնպես Իսահակյանի համար «Դոն Զիշտոնը» որպես վեպի լավագույն մեռած գրականության պատմության մեջ, «Ուստա Կարոն» գրեթե միշտ նրա հայացքի առջև է եղել:

Ահա մի շատ էական բնութագիր Իսահակյանի անտիպների շարքից վեպի հերոսների՝ Ուստա Կարոյի և Օրթն Հարութի մարդկային խառնվածքի վերաբերյալ. «Կարոն մեծ մանուկ է, մեծ երեխա, պատանի, վառ երեսակայություն ունի, վատը, թույլը, փոքրը, տգեղը լավացնում է, բարձրացնում, գեղեցկացնում, մեծացնում - իրականությունը բանաստեղծացնում է, էշը ձի է դարձնում, Սանամին՝ Դուլցինեա, իրերը իր ցանկացած լույսերի, գույների, ձևերի մեջ է տեսնում. վարդագույն ակնոցներով է նայում աշխարհին, «գունագեղ շուշաբանդից է նայում աշխարհին», ինչպես իշխանները իրենց պալատների լուսամուտների ապակիներից, և դրա պատճառով նա ուրախ, զվարթ մարդ է, իր երևակայածը ցանկացած և իրականացած է տեսնում, իր չունեցած քարվանդ՝ իրական, իր տեսած տեղերը՝ հեքիաթական... իր տենչերը, իր երազանքները՝ իրականացած, ապրող: Նա հիմար մարդ չէ, իհարկե, խելացի մարդ է, տեսնում է աշխարհի չարիքները, դժգոհ է, բավարարված չէ, բայց այդ տրամադրությունները ժամանակավոր են, անցողակի, նրա խորքը - պայծառ է, լավատես: Պատանու պես սիրահարված է, ոգևորված, խանդավառ, կենսուրախ:

Բայց Հարութը պեսիմիստ է, աշխարհագրացումը նրա՝ տխուր, մռայլ: Իրականությունը, աշխարհը խռոցում է նրան, դժգոհ է, անմխիթար, չբավարարված, ժխտում է, քննադատում է աշխարհը, չի ընդունում: Աշխարհի գեղեցիկ լավ բաներն էլ աչքին վատ են թվում, սուտ, անցողակի, պատրանք, քայքայվող, մեռնող, փռշիացող: Նա ուզում է կատարյալ, իդեալական աշխարհ, դրախտ, անմահություն, հավիտենական ջահեղություն, հավիտենական երջանկություն:

...Ուստան էլ, Հարութն էլ երազներով են ապրում, միայն տարբերությամբ, որ Ուստան իրականությունը երազացնում է, գեղեցկացնում և ընդունում: Իսկ Հարութը իրականությունը ժխտում է, մերժում է և ատում իր երազների մեջ՝ մոռանալու համար չարը, և գիտակցում է, որ երազները իր գլխումն են և կիրականացան միայն այն ժամանակ, երբ ինքը աստված դառնա և նոր աշխարհ շինե:

Իսկ Կարոն ուզում է. հեղափոխությամբ, կոպով այս աշխարհը բարելավել, ուղղել, շտկել:

Հարութն ասում է. «Աստված լինեի, ջնջեի այս աշխարհը և շինեի սրտիս ուզած աշխարհը...»:

Իսահակյանի արխիվից այս ծրագրային անտիպ գրառումը՝ վեպի գլխավոր հերոսների մարդկային խառնվածքների վերաբերյալ, մեկն է հարյուրավոր նման տիպի բնագրերից: Վեպի բնույթի, կառուցվածքի, գա-

դափարական ուղղվածության, լեզվի և ոճային առանձնահատկությունների, հերոսների մարդկային տիպերի շուրջ Իսահակյանը թողել է հազարից ավելի գրառումներ ու նշումներ: Այդ աշխատանքը այնպես է կրանել նրան, որ հավաքված նյութերից կարելի է ստեղծել յուրովի մի նոր վեպի մասին: Արված աշխատանքի վերաբերյալ պատկերացում կազմելու համար ասենք, որ «Ուստա Կարոյի» բնագրերը և նյութերը վեպի շուրջ կազմում են Իսահակյանի արխիվի ողջ կազմի մեկ չորրորդը:

Տարիների ընթացքում «Ուստա Կարոն» դառնում է հեղինակի յուրօրինակ երկվորյակը, երկրորդ եսը, իր մտքերի, գաղափարական հայացքների արտահայտիչը. վեներտիկյան մամակներից մեկում Իսահակյանը գրում է (1924, հոկտեմբերի 25). «Ուստա Կարոյի» մեջ պիտի գտնես այն բոլոր մտքերը, որ ինձ հուզում են, հուզել են՝ ազգ, հայրենիք, ազատություն, կուլտուրա, պատերազմ, Աստված, տիեզերք, նյութ, ուժ, կին, սեր, մորալ, մարդ, մահ և այլն և այլն...» (ԱԻՆ, 29):

Անվերապահորեն կարող ենք ասել, որ իր ոչ մի ստեղծագործության շուրջ Իսահակյանը այնքան չի աշխատել, չի մտորել, ինչքան «Ուստա Կարոյի»:

* * *

Երկրորդ տևական ու գորեղ անդրադարձը վեպին պետք է համարել Իսահակյանի վեներտիկյան շրջանը՝ 1921-1926 թթ.: Այս հեքիաթային ու անդորր քաղաքում, Մուրք Ղազարոս կղզու՝ հայության դարավոր ավանդների լավագույն պահապանի հարևանությամբ, աշխատանքը վեպի շուրջ յուրօրինակ վերածնունդ է ապրում:

«Ուստա Կարոյի» ավարտված առաջին տարբերակի կողքին ստեղծվում է նոր երկ, նոր՝ նաև ըստ ձևի. «Ձևը վեպ է, վեպ չէ. օրագիր է, օրագիր չէ. հուշեր են, հուշեր չեն: Այս գրքի մեջ բուշկիզմի մասին շատ բացասական ճշմարտություններ կան ասված: Եվ ես տեսնում եմ, որ ինձ ավելի կհաջողվի գրական կերպով արտահայտվիլ, քան հրապարակախոսական» (ԱԻՆ, 52):

Եվ սակայն վեպի նախնական ծրագիրը, այուժեն ի վիճակի չի լինում պարփակել իր մեջ, իր գլուխների կազմի մեջ բոլոր այն հսկայածավալ նյութերը, որ Իսահակյանը ոգևորված հանձնել էր թոթին՝ մտածելով, թե դրանք իրենց տեղը կգտնեն վեպի երկրորդ տարբերակում: Ըստ Իսահակյանի մտահղացման և իր իսկ խոսքերով ասած՝ «...«Ուստա Կարոն» բռնելու է 1000 մեծադիր էջ, ընդգրկելու է մեր ողջ կյանքը, բոլոր դասերը, մտքերը, հոսանքները, էպոսը: ...Մարասիեյի դժվար գործ է - 1000 էջի վրա խաղալ, ուր հարյուրավոր մարդիկ կան, գյուղ ու քաղաք իրար խառնված, անկիրթ ու կրթված մարդիկ, անթիվ գավառաբարբառներ՝ մանրակրկիտ

ճշտությամբ գրված, ոչ թե հիշողությամբ գրված, այլ բազմաթիվ հում նյութեր մայելով: Անթիվ մտքեր, անթիվ գաղափարներ, հոսանքներ կան այնտեղ՝ դաշնակցությունը, հնչակը, սոցիալ-դեմոկրատը, կոերականը, պետիմիզմ, օպտիմիզմ, քահանա, վարդապետ, ինժեներ, վարժապետներ, քուրտեր... մի խոսքով՝ մի քառս՝ բայց ներքին մի հզոր կապով կապված» (ԱԻՆ, 63-64):

Եվ որքան խորանում էր Իսահակյանը վեպի աշխատանքների մեջ, այնքան նրա ավարտը հեռանում էր: Եթե նրան 1922 թվի հունվարին թվացել է, թե «...«Ուստա Կարոն»... թեև ավարտած եմ, բայց անվերջ սրբագրում եմ, գրում, ջնջում, ավելցնում, պակսեցնում... այդպես է. Տոլստոյը ութ անգամ է գրել «Война и мир»-ը... Բայց նա հոգով համզիստ է եղել և ապահով. ապարանքի մեջ նստած, նորասպասկ...»²:

Նույնը և գրում է Վենետիկից Միմոն Հակոբյանին. «Ուստա Կարոս» թեև վերջացած է, բայց նորեն վերջացած չէ, մի քանի ամսվա դեռ կարոտ է» (1922, 16 ապրիլ)³, այնուհետև՝ «Ուզում եմ «Ուստա Կարոն» վերջնականապես կադապարել, որ այս տարի վերջակետ դնեմ» (1922, 28 ապրիլ)⁴: Վենետիկում նրա առջև պարզվում է ապագա վեպի իրական ծավալը, այդ մասին ևս նա պարզորոշ գրում է Միմոն Հակոբյանին (1922, 14 մայիս). «Հարցնում ես, թե «Ուստա Կարոս» մինչև տարվա վերջը «Արեգի» մեջ դնելով կապառվի՞. տո, տունդ չքանդվի, որ խեղճ ես. «Ուստա Կարոն» 1000 երեսանոց մի բան է, որ սեղմելով, սեղմելով, նորից 700-800 էջ է դուրս գալու... «Ուստա Կարոն» իր ողջ ծանրությամբ նստել է վրաս, չեմ վերջնականապես ազատվում... Հույս ունիմ, որ այս տարի «Ուստա Կարոյիս» վրա վերջնական կնիքը դնեմ»⁵:

Ըստ ամենայնի, Իսահակյանը համարում էր, որ վեպն ավարտված էր, և նա բանակցում է «Հայրենիք» ամսագրի խմբագիր Ռուբեն (Արտաշես) Դարբինյանի հետ վեպի հրապարակման վերաբերյալ: Իսահակյանը գրում է ընկերոջը. «1922, 22 օգոստոս, Վենետիկ. Վեպս թեև ավարտված է, բայց մշակության շատ պետք կա: Ավելորդ չէ ասելը, որ պատերազմի ընթացքին նա մնաց Գերմանիա: Ուրեմն, 4-5 տարի մի տող չեմ գրած ու ջնջած նրա մասին: Չիմադադարից հետո գնացի Բեռլին, բայց այդ շրջանում էլ միայն 300 երես եմ ուղղել... Ուզում եմ այս տարի աշունքից՝ սեպտեմբերի վերջերից դրանով զբաղվել և վերջացնել: Արդ, եթե կարող է «Հայրենիքը» իբրև թերթին «Ուստա Կարոս» տպել, այն ժամանակ նոյեմբերից սկսած կարող ենք հրատարակել: Իսկ եթե ուզում ես առանց «Հայրենիքի» մեջ տպելու գիրք անել, այն ժամանակ հունվարին կուղարկեմ քեզ գրքի առաջին մասը, 350 երես: Մինչև սա տպվի, մյուս մասն էլ կհասցնեմ: Ինձ համար ավելի երկյուրդ ձևն է հարմար, երկու հատորով գիրք, որ մինչև մեկ տարի պատրաստ կլինի» (ԱԻՆ, 36-37):

1922-1925 թթ. Վենետիկում բանաստեղծը ձգտում է անպայման ավարտել վեպը և սկսում է առանձին գլուխները հրատարակել Բոստոնում լույս տեսնող ՀՅԴ պարբերական «Հայրենիք» ամսագրում (1924, N 7, 1925, N 3-6 և N 9-11) վերնագրերով՝ Հատվածներ «Ուստա Կարո» անախյ վեպից:

Եվ այդ հատվածները արդեն երկրորդ տարբերակի մշակված, ավարտված գլուխներն էին: Ահա այդ նոր մշակումով մա ուզում էր վեպը տպագրել առանձին գրքով, ինչի մասին գրում է կրկին Ռ. Դարբինյանին. «Վենետիկ, 24 սեպտեմբեր, 1922. Վեպս ունի մոտավոր-քապես մեկ մլիխոն տառ: Եթե գիրք անենք, մեծադիր էջով կբռնե մոտ 750-800 էջ, ավելի փոքր գիրքով՝ 1000 էջ, տառերն էլ կարծես ոչ մեծ: Ինձ համար ավելի հարմար է առանձին տպելը, որովհետև չեմ շտապի և, վերջապես, գիրք կունենամ...» (ԱԲՆ, 38):

Եվ բվում էր, որ բանաստեղծը «Ուստա Կարոյի» երկրորդ տարբերակի շուրջ աշխատանքները պետք է վերջացրած լիներ Վենետիկում, մի քաղաքում և ժամանակահատվածում, ուր մա առավել արդյունավետ աշխատեց իր արձակ կոթողի շուրջ: Այս մասին է վկայում նրա մի շատ արժեքավոր նամակը իր հին ընկերոջը՝ ՀՅԴ ականավոր գործիչ Վահան Նավասարդյանին. «21 հուլիսի 1925, Վենետիկ. ...այդ սարսափելի «Ուստա Կարոն» բռնում է մոտ 1700-2000 էջ, սակայն այդ 2000 էջը գրել եմ 5-6000 էջերի մեջ, ու այդ քառսից ու ծովից կազմում եմ գլուխները, չես իմանում, թե ինչ տաժանելի աշխատանք է, բայց ես ոգևորված եմ, որ անկարելի, մեծ, հզոր գործի եմ ձեռնարկել, մարդ պետք է հզոր գործեր կատարե, անպարտելի դժվարությունների հաղթե, պողպիզ (սխրագործություն) կատարե իր կյանքում, իմացած եղիր... և նույնիսկ «Հայրենիքում» տպված գլուխները դեռ վերջնականապես չեն մշակված, տպվելուց հետո եմ մշակում, մշակված գիրք պիտի դառնա, երկու հատոր: «Ուստա Կարո»-ի մեջ մեր կյանքի վերջի 20-25 տարին է ամփոփված, սկսած 1904 թվից մինչև այսօր, մինչև վերջացած տարին, իսկ վեպս կվերջանա երկու երեք տարուց հետո, առաջին հատորը մի տարուց հետո, 1000 էջը, իսկ մնացած... հետո, ա՛յ, թե վեպս ավարտված լինի բոլշևիզմի փլուծով, դու տե՛ս Չառիկը: Վեպիս մեջ հյուսված եմ գյուղ ու քաղաք, Դաշնակցություն, ռուս եղբայրություն, թրքահայ ժողովրդի ջարդն ու փչացումը, տեղահանություն, բոլշևիզմ և այլն և այլն: Պատմական վեպ չէ, այլ հոգեբանական, փիլիսոփայական, և շա՛տ տարրեր կան մեջ՝ էպոս, թոման, լիրիկա, հումոր... դա օվկիանոս է, վեպ չէ:

Չարենցը հիացավ, զարմացավ, և դասեց հավասար Դոն-Զիշոթի, Վայնա ի միր (Պատերազմ և խաղաղություն), Հոմերոսի հետ: Միայն թե ապրիմ մի երեք տարի և հաց ունենամ... Այս վեպիս համար պետք է մի 6 ամսով լինեմ Հայրենիք, և դրա համար էլ բոլշևիկների հետ կապեր եմ պա-

հում, իսկ վեպիցս հետո նրանք գլուխս կտրելու ֆերման պիտի արձակեն, որովհետեւ անտիբոյլէիկ վեպ է (այս չասացի Չարենցին, մյուս կտորները կարդացի)» (ԱԻՆ, 16-17):

Թե գաղափարական ի՞նչ ուղղվածություն էր ունենալու վեպի երկրորդ տարբերակը՝ վկայակոչում է հետևյալ հատվածը Ռ. Դարբինյանին ուղղված Իսահակյանի մամակից (1923, սեպտեմբերի 13). «Եվ վերջապես սոցիալիզմը մի բարեգործական բան է, ոչ թե մետաֆիզիկա, փիլիսոփայություն, ընդգրկող աշխարհայացք: Մարքսը գրոշմանց փիլիսոփա է, շատ նախ: Սոցիալիզմը մեծ քաղաքների արդյունք է: Գյուղացին երբեք սոցիալիստ չի դառնա... Ես խղճում եմ բանվորին - միայն այսքան: Բայց նրա պաշտամունք, նրա դիկտատուրա - զարշում եմ:

Ահա այսպիսի բեկում առաջ բերեց իմ մեջ զգվելի բուշկիզմը... Եվ այս ամենը իմ վեպի մեջ մարմնացնում եմ: Լավ վեպ է դուրս գալու, շա՛տ ինքնատիպ, շա՛տ նոր: Բայց որովհետև դանդաղ եմ աշխատում, սա էլ դանդաղ է առաջ գնում: Բայց բուշկիզմի անկումից առաջ մա լույս կտեսնի» (ԱԻՆ, 44):

Ուրեմն ինքը պարզորոշ զիտակցում էր, որ վեպը պետք է ավարտեր մինչև բուշկիզմի՝ երկիր մուտք գործելը: Բայց, այնուամենայնիվ, չավարտեց: Եվ սակայն բանաստեղծը չափազանց լավատես էր բուշկիզմի մուտալուտ անկման վերաբերյալ և, որ շատ հազվադեպ է լինում, մա սխալվեց տվյալ կետում. վեպը լույս է տեսնում բուշկիզմի անկումից հետո: Բանաստեղծի կանխատեսածից 80 տարի ուշացումով...

Այն ձևով, ինչպես ուզում էր ավարտել «Ուստա Կարոն» Իսահակյանը, հնարավոր էր միայն Վենետիկում, այսինքն՝ Եվրոպայում: Եվ եթե այդպես մա հրատարակեր վեպը, իր ետևից այրած կլիներ վերադարձի կամուրջները: Հավանաբար նրա առջև մեկընդմիշտ կփակվեին հայրենիք վերադարձի դռները: Իսկ դարձը հայրենիք նրա համար 1926 թ. սկսյալ որոշված հարց էր: Հիրավի, մա ավելի ուզում էր վերադառնալ հայրենիք («15 տարի եղավ, որ պանդուխտ եմ. 15 դար... բավական է», ԱԻՆ, 20), քան թե ավարտեր «Ուստա Կարոն»:

Եվ այնժամ, երբ Իսահակյանը որոշում է Խորհրդային Հայաստան վերադառնալ, աշխատանքները դադարեցնում է, պատրաստի գլուխներն անգամ չի ուղարկում «Հայրենիքին»: «Ի՞նչ եմ պատճառները,- գրում է մա մույն Ռուբեն Դարբինյանին (1926 թվին),- շա՛տ ու շա՛տ անհատական, հասարակական, ազգային: Եվ այդ ամենի վրա քանձրացած իջնում է պանդուխտ, անհայրենիք ամայի կյանքս և անապահով կյանքս: Պետք է վերջ տալ այս ամենին, քանի նրանք չեն վերջ տվել ինձ: Առայժմ միակ ելքը հայրենիք վերադառնալն է: ...Ահա թե ինչո՞ւ դադարեցրի Ուստա Կարոյի հրատարակությունը. մա չեղավ իրականացումը իմ մտածումների, իմ տեսիլի» (ԱԻՆ, 66, 67):

Պետք է հասկանալ, որ ոչ թե վեպը չդարձավ իրականացումը բանաստեղծի մտածումների, տեսիլի, այլ հայրենիքի՝ Հայաստանի հետագա տարիների պատմական ճակատագիրը: Իսահակյանը չուզեց իր վեպով ինքն իր դեմ գնալ, իր իդեալների, իր չիրականացած երազների: Ուստի նա պետք է «Ուստա Կարոն» վերջացրած լիներ Եվրոպայում, մինչև Խորհրդային Հայաստան վերադարձը, իսկ մնացյալը, մնացյալը եղավ այնպես, ինչպես որ կա:

1926-1929 թթ., 4 տարի ապրելով Խորհրդային Հայաստանում, նա շատ լավ ըմբռնեց, թե ի՞նչ է նշանակում բոլշևիզմը, և, որ ամենից ցավագինն էր, հայաստանյան դեկադարները ջանում էին հայ նոր սերնդի գիտակցությունից դուրս մղել ազգային մտածողություն հասկացողությունը՝ հայկական հարց, ազգային անկախություն, 1915 թիվ, հայոց ցեղասպանություն, պատմական հայրենիքի կորուստ, հայոց տարածքների՝ Արցախի, Ջավախքի, Նախիջևանի հանձնում «եղբայրական» հանրապետություններին, ինչպես և Հայաստանի բնության ապականում, Սևանի ջրերի միակեցում և այլն, և այլն: Ինչպե՞ս պիտի նա ավարտեր այս մթնոլորտում իր «Ուստա Կարոն»: Կամ եթե այն ավարտեր, ինչպե՞ս պիտի այդ գիրքը հրատարակեր մարքսիզմի սատրապների աչալուրջ հայացքի տակ: Եվ ի՞նչ կտպանար իրեն... Այնպես որ վեպի երկրորդ տարբերակի անավարտ լինելու պատճառը մի կարևոր չափով կապվում էր Խորհրդային Հայաստանի քաղաքական իրականության հետ: Թեև բանաստեղծը վերջնականապես չի դադարեցնում աշխատանքները իր վեպի շուրջ:

1934 թվի սեպտեմբերի 1-ին Իսահակյանը գրում է. «Ուստա Կարոյի քարավանը շատ գլխացավանք տվեց ինձ: Հիմա պիտի վերջնական ձևը տալ»: 1937 թվի օգոստոսի 30-ին Սևանից գրում է Հովհաննես Շիրազին. «Ինչ որ գրում ես «Ուստա Կարոյի» մասին, ճշմարիտ է, բայց պիտի ժամանակ ստեղծեմ, որ ինքնամիտի, բոլորանվեր դրանով զբաղվեմ: Հույս ունեմ, որ գլուխ բերեմ այս իմ խորին տենչանքս: Այս տարի, ո՛չ ուշ» (VI, 331): 1940 թվի հունիսի 24. «Այս տարի ձեռնարկում եմ «Ուստա Կարոն» ավարտելու» (VI, 346): Սակայն վեպի վերջը այդպես էլ չէր երևում:

Սակայն Իսահակյանը հակառակ իր կամքի, իր երազանքի դեմ չէր կարող չլուծված «մեծագույն հարցին» տալ արհեստական ոչ հայանպաստ ավարտ: Փոխեր իր վեպի ազգային ուղղվածությունը, վերաբերմունքը դեպի դաշնակցությունը, ինչը, Իսահակյանի խոսքերով ասած, «վեպի մթնոլորտն է» (ԱԻՆ, 49), հաշտվել հարազատ ժողովրդի բնությանը անհարիր մի գաղափարախոսության հետ, հաշտվել պատմական Հայաստանի բզկտված քարտեզի հետ և մինչև իսկ, եթե ինքը՝ որպես մի անհատ, ստիպված եղավ համակերպվել այդ իրականությանը, ապա զալով Խորհրդային Հայաստան, որպես «Ուստա Կարոյի» հեղինակ, հավատարիմ մնաց իր դավանած սուրբ պատգամներին:

Թեպետ և մինչև խոր ծերություն, մինչև իր կյանքի վերջը Իսահակյանը շարունակեց աշխատանքները «Ոստա Կարոյի» շուրջ, երբեմն ինձ քվում է, քե մա երկյուղում էր վերջակետ դնել՝ ստածելով, որ վեպի ավարտով իր կյանքն էլ կավարտվի: «Ոստա Կարոն» բառիս բուն իմաստով դարձավ Իսահակյանի կյանքի վեպը, կյանքի գիրքը...

Այժմ մի քանի խոսք «Ոստա Կարոյի» առաջին տարբերակի մասին: Առաջին տարբերակը, որի հրաշալի պահպանված ինքնագիրը կազմում է 356 մեծադիր էջ, ամբողջապես ավարտված երկ է: Առաջին տարբերակ անվանումը սույն դեպքում պայմանական իմաստ ունի, քանի որ Իսահակյանը այդպես էլ չավարտեց երկրորդ տարբերակը: Այնինչ 1910-1912 թթ. ստեղծած «Ոստա Կարոյի» ինքնագիրը ըստ էության ավարտված գեղարվեստական ստեղծագործություն է, բացարձակապես լիարժեք և իր ուրույն արժեքն ունեցող կոթող:

Այն ստեղծվել է բավական կարճ ժամանակահատվածում՝ մեկ տարի և ինը ամիս, այնինչ երկրորդ տարբերակի շուրջ աշխատանքը, կարելի է ասել, տևեց մի ամբողջ կյանք՝ 1912 թվից մինչև բանաստեղծի արևամուտը:

Ինչպես ցույց են տալիս վեպի երկրորդ տարբերակի ինքնագրերը և բովանդակության ցանկը՝ ըստ գլուխների, վեպը արտաբնապես առանձնահատուկ փոփոխության չէր ենթարկվելու, այն սկսվելու և ավարտվելու էր նույն գլուխներով. ոչ ժամանակաշրջանն էր փոխվում, ոչ հիմնական գործողությունների վայրը: Մյուսին հարստամալու էր մի շարք նոր իրավիճակներով: Մնալու էին նույն հիմնական գործող անձերն էին, և միայն փոխվելու էր Ոստա Կարոյի հավատարիմ զինակից ղեկերոջ, այսպես ասած «Իսահակյանական Մանչոյի» կերպարի ազգությունը՝ թուրք Մահմուդ Չավուշը պիտի դառնար հայ՝ Չավուշենց Փիրս: Եվ դա բնական է. 1915 թվից հետո այլ կերպ չէր կարող լինել: Քանզի երբ Իսահակյանը սկսեց գրել վեպը և հայկական Դոն-Կիխոտի կոթքին դրեց նրա հավատարիմ զինվոր Սանչո Պանսային՝ թուրքազգի Մահմուդ Չավուշին. Թուրքիան դեռևս լրիվ չէր քաղաքացիական հանցագործ էությունը:

Եղեմից հետո էականորեն փոխվելու էր վեպի գաղափարական ուղղվածությունը, ինչպես և Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո վեպն իր բնույթով ընդդիմադիր էր դառնում թուրք-բուլշևիկյան ալյանսին:

Հարկ է ասել, որ երկրորդ տարբերակում շատ էր զորեղանում Ոստայի ամենասիրելի ղեկերոջ՝ փիլիսոփա ու միստիկ Օրթե Հարութի կերպարը: Հարութը Ոստայից հետո դառնում էր վեպի լիարժեք հերոսը, իրապես՝ Իսահակյանի երկրորդ alter ego-ն. հեղինակի մարդկային էությունը, խառնվածքը այս վեպում յուրահատուկ ձևով երկփեղկված է երկու անհա-

տականությունների՝ Ուստա Կարո և Օրթե Հարութ: Ահա այս հանգամանքը առաջին տարբերակում դեռևս բացահայտված չէր: Ըստ որում, ինչքան աշխատանքը վեպի շուրջ ծավալվում, առաջ էր գնում, այնքան կարևորվում էր Հարութի կերպարը: Իսահակյանի անհատականության լրիվ քարգմանը չէր կարող լինել միայն Ուստա Կարոն: Նրան պետք էր լավատես Ուստա Կարոյի կողքին և հոռետես, աշխարհը մերժող փիլիսոփա, ինտելեկտուալ հերոս, ինչպիսին եղավ Օրթե Հարութը: Սակայն իր ամբողջությամբ, որպես մի կոտ գեղարվեստական համակարգ, վեպը շատ չէր փոխվելու: Վեպի հիմնական ասեղիքը՝ պատումը, և գրման ձևը՝ ոճի ու կառուցվածքի իմաստով, արդեն լիարյուն կերպով ձևավորվել էր «Ուստա Կարոյի» «մայր ձեռագրում» (որին հետագայում մենք՝ գրականագետներս, կոչեցինք առաջին տարբերակ):

Առանձին ուսումնասիրության նյութ է այն պատմությունը, թե ինչպես բանաստեղծ Իսահակյանը ձեռնամուխ եղավ գրելու նման մի մեծածավալ արձակ երկ, այսինքն՝ արդեն մեծ անուն համաժ բանաստեղծը խիզախում է անցնել արձակի: Եվ եթե Իսահակյանին մոտ կանգնած որոշ գրողներ և քննադատներ, հիմք ընդունելով «Ուստա Կարոյի» երկրորդ տարբերակի անավարտությունը, այն տեսակետն են արտահայտում, որ, իբր, Իսահակյանը չավարտեց «Ուստա Կարոն», որովհետև նա առաջին հերթին քնարերգու բանաստեղծ էր և չպիտի կարողանար իրագործել իր առջև դրված խնդիրը՝ «Ուստա Կարոյի» նման մի վիթխարի էպիկական վեպ ստեղծելու, տեղյակ չէին, չգիտեին, որ վաղուց կար վեպի ավարտուն՝ 356-էջանոց ինքնագիրը, և որ եղածով իսկ արդեն «Ուստա Կարոն» դասական արձակ կոթող է, այնպես որ նման բնույթի բոլոր պնդումները անհիմն են: Հենց Իսահակյանի ստեղծագործության հիմնական առեղծվածներից մեկն էլ այն է, որ զտարյուն քնարերգու բանաստեղծը կարողացավ նման կատարյալ, արձակի ժանրի բոլոր կանոններին համապատասխան վեպ ստեղծել: Եվ ե՞րբ. «Աբու-Լալա Մահարուց» հետո, երբ հետապնդվում էր իշխանությունների կողմից, երբ ստիպված էր թողնել Կովկասը, և ինչ-որ մի կերպ հարմարվել տարագիր կյանքին: Համենայն դեպս, կյանքի արտաքին պայմանները անբարենպաստ էին վիպական մեծ երկ ստեղծելու համար, սակայն հենց վեպի ստեղծման փաստը խոսում է այն մասին, որ Իսահակյանի նման ստեղծագործողները, երբ ասելիքը գալիս է, «գրման տենդի» մեջ կհասնեն իրենց նպատակին՝ ինչ էլ ուզում է լինի:

Անթիվ, անվերջ հույսեր և պատրանքներ էր կտպում Իսահակյանը իր նոր վեպի հետ:

Եվ սակայն վեպի ավարտից մի քանի ամիս անց նա պետք է հեռանար Թուրքիայից և մի քանի տարի շարունակ հոգ տաներ, թե ինչպես մինչպատերազմական Եվրոպայում ինքը՝ լինելով ռուսահայատակ, ճարդ տեսներ փոքր մանչուկի, կնոջ: Մի՞թե այդ դժվար կեցությունը կտար նրան

երջանիկ պատեհություն վերջնական մշակման ենթարկել վեպը և հրատարակել: Իսկ վրա հասած առաջին աշխարհամարտը և մահավանդ Հայոց մեծ եղեռնի արյունոտ իրականությունը վեպի փաստորեն ավարտված տարբերակը ուղարկեց գրասեղանի ընդերքը, և Իսահակյանը ձեռնամուխ եղավ «Ուստա Կարոյի» երկրորդ տարբերակի ստեղծմանը, որը պիտի ներառներ իր մեջ բանաստեղծի այքի առաջ ծավալվող վիթխարի պատմական փոփոխությունները: Ընդամեն, մեկ ողբերգականին հաջորդում էր ավելի ողբերգականը, ավելի մահաբերն ու հեղձուցիչը:

Երբ ստորգետնյա ճամփավերջին դեռ լույսի շողն իսկ չէր երևում, Իսահակյանի կամքից անկախ «Ուստա Կարոն» կապվեց հայկական հարցի, հիրավի դարիս ամենաանլուծելի հարցերից մեկի հետ: Բնականաբար, Իսահակյանը հույսը չէր կորսում, որ հայկական հարցը ի վերջո լուծվելու է, և ենթագիտակցաբար մտածում էր, որ կգա օրը, և «Ուստա Կարոն» էլ կկնքի իր ավարտը: Ավա՛ղ, այս երկրորդ տարբերակի համար բանաստեղծի մեկ մարդկային կյանքը բավարար չեղավ: Բայց չմոռանա՛նք, որ Իսահակյանի գրասեղանի հեռու մի անկյունում իր ժամին էր սպասում «Ուստա Կարո» վեպի առաջին տարբերակը:

Ամտարակույս, հրաշալի կլիմեր, եթե Իսահակյանը վեպի երկրորդ տարբերակը, որի շուրջ մա մոտ չորս տասնամյակ աշխատեց, ավարտած լիներ: Բայց և անգամ այդ դեպքում վեպի տվյալ ձեռագիրը՝ առաջին տարբերակը, չէր կորցնի իր ո՛չ իմաստային և ո՛չ էլ գեղարվեստական արժեքը: Առաջին տարբերակի մասին խոսելիս բնավ պետք չէ այն համեմատել երկրորդի հետ: Վեպի առաջին տարբերակը ունի իր ուրույն տեղը Իսահակյանի արձակի համակարգում և նշանավորում է այն ճշմարտությունը, որ բանաստեղծը ի զորու եղավ ստեղծելու վիպական կատարյալ ստեղծագործություն:

Եվ առաջին տարբերակի ավարտից հետո տեղի ունեցած պատմական փոփոխությունները, բնականաբար, արդեն չէին կարող կապ ունենալ գրածի վրա, քանզի վեպի Վերջաբանում (Հեշ-ի գլխում) Իսահակյանը դրել էր վերջակետը: Եվ նրա մտահղացումը՝ ձեռնամուխ լինել նոր տարբերակին, արդեն, փաստորեն, նշանակում էր շարունակել գործը, սակայն ոչ առաջին տարբերակը, և այդ իսկ պատճառով 356 էջանոց այս ձեռագրում այդ փոփոխությունները բացակայում են, ձեռագիրը ավարտուն երկ է սկզբից մինչև վերջ: 1912 թվի հունվարի 19-ից հետո «Ուստա Կարոյի» շուրջ արված բոլոր աշխատանքները արդեն վերաբերում են վեպի երկրորդ տարբերակին, ոչ թե «մայր ձեռագրին» (356 էջանոց): Իսահակյանը փաստորեն վեպը նորից է սկսում, նոր էջից: Եվ հենց այս հանգամանքն է մեզ իրավունք տալիս «Ուստա Կարոյի» առաջին տարբերակը հրատարակել որպես ավարտված ու ինքնուրույն ստեղծագործություն:

Հակիրճ ծանոթությունը վեպի հետ արդեն իսկ բացահայտում է երկի անբաբույց հայրենասիրությունը և նրա կենտրոնական հերոսի՝ Ուստա Կարոյի անձը՝ որպես ռոջ ստեղծագործության շարժիչ ուժ: Ամեն ինչ նրա շուրջն է ծավալվում և նրանով է պայմանավորված: Վեպի առաջին տարբերակի բոլոր 23 գլուխների և Վերջաբանի կենտրոնական դեմքը Ուստա Կարոն է, նա ներկա է բոլոր գլուխներում, այս օրինաչափությունը խախտվում է երկրորդ տարբերակում, ուր ստեղծվել են մի շարք գլուխներ Օրթե Հարութի վերաբերյալ, և ուր ներկա չէ Ուստա Կարոն: Այս հանգամանքը Հարութի լիիրավ երկրորդ հերոս դառնալը, և նրա կյանքի, աշխարհայեցողության մասին (ըստ Իսահակյանի ծրագրի) թվով յոթ գլուխների ավելացումը կազմում են առաջին և երկրորդ տարբերակների միջև եղած էական տարբերությունը: Առաջին տարբերակում Հարութը դեռ չի մղված առաջին պլան:

Բայց, իհարկե, վեպի լիարյուն հերոսը, հեղինակի աշխարհայեցողության արտահայտիչը Ուստա Կարոն է, պատահական չէ, որ Իսահակյանը, վեպի առաջին տարբերակի անվանաթերթի վրա բերելով Ալֆոնս Դոդեի խոսքերը՝ Տարտարենի մասին, վերափոխում է այն հայերեն իր ուզած իմաստով. «Ամեն մի հայ փոքր-ինչ Ուստա Կարո է»:

Անշուշտ, Իսահակյանը կոզենար, որ ամեն մի հայ փոքր-ինչ Ուստա Կարո լիներ, այսինքն՝ հայրենասեր, անձնագոհ, ռոմանտիկ սիրահար, միամիտ և մաքուր և այլն, և այլն: Սակայն կյանքը ցույց էր տալիս ուրիշ բան, քանզի իր հերթին Ուստա Կարոն շատ ավելի նման էր Դոն-Կիխոտին, քան թե Դոդեի հերոս Տարասկոնցի Տարտարենին, որն ավելի շատ տնաբույժ քաջագործ է՝ սուտասան և երևակայող, խորամանկ և հաշվեկատար, ասես լինի Դոն Կիխոտի և Մանչո Պանսայի խառնուրդը, մինչդեռ Իսահակյանի Ուստա Կարոն ճիշտ և ճիշտ հայկական Դոն-Կիխոտն է՝ մաքուր և ազնիվ իր նպատակների մեջ, անձնագոհ, հոգին բաց, արդարամիտ, միշտ պատրաստ հասնելու ընկճվածին, տառապալիք ու չքավորին, լայնսիրտ, բայց և երեխայի պես միամիտ, չընկալող իրականությունը, պատմական զարգացումները, բարի երագող, որ իրապես չէր կարող չափել իր ցանկություններն ու հնարավորությունները: Ուստի և, ի վերջո, Ուստա Կարոն իր ծրագրերում ու երազանքներում անկում է ապրում, որովհետև մարդիկ չկան են ու ընչաքաղց, անազնիվ ու անգութ: «Ուստա Կարո» վեպը դասական օրինակ է ռոմանտիկ հերոսի երազանքի և դաժան իրականության միջև ընկած անհամատեղության, երբ ցանկությունները վես են ու ազնիվ, սակայն հնարավորությունները սահմանափակ են, ավելի շուտ՝ անիրագործելի: Այս տեսակետից Ուստա Կարոն մոտ է հենց Իսահակյանի պաշտած Մերվանտեսի Դոն-Կիխոտին: Այնպես որ նրան ավելի ճիշտ կլիներ անվանել «հայկական Դոն-Կիխոտ»: Մանավանդ, որ նրա կողքին է իր յուրօրինակ Մանչո Պանսան՝ հանձին Զավուշի կերպա-

րի: Եթե խորանանք այս կերպարների մեջ, շատ ընդհանուր գծեր կհայտնաբերենք, կհամոզվենք, որ նրանց կապը, նմանությունը միայն գրական բարեհունչ հնարանք չէ, և ոչ էլ սոսկ արտաքին համընկում, այլ շատ ավելի խորն է ու էական: Ձուր չէր Իսահակյանը գրում. «Մի վեպ գրելիս - կաղապար, տիպար պիտի վերցնես հանճարի գործը: Դրամա գրելիս՝ «Համլետ» նկատի ունեցիր, վեպ գրելիս՝ «Դոն-Քիշոտ»:

Այս երկու կերպարների հիմնական նմանությունը իրենց առջև դրած նպատակի իրականացման անհնարինության մեջ է: Ի վերջո ի՞նչ էր Ուստա Կարոյի նպատակը՝ բանակ հավաքել, պատերազմի գնալ Սուլթանի դեմ, անձամբ կռիվ բռնվել նրա հետ, ոչնչացնել նրան և այդպիսով ազատագրել Արևմտյան Հայաստանը: Իր վառ երևակայությամբ Ուստան համոզված էր, որ կհասնի Սուլթանի դուռը և կհաղթի նրան, Ուստային թվում է, թե բավական է սոսկ ազնիվ ցանկությունը, և Պր թագավորը՝ Կարսի դաշնակցական կազմակերպության ղեկավարը, կտա նրան 10-20-հազարանոց բանակ, զենք և կօրհնի նրա արշավանքը: Պատմական իրականության վերաբերյալ Ուստա Կարոն զաղախար չուներ. նա չի պատկերացնում, թե ինչ է Թուրքիան, թուրք բանակը, Սուլթան Աբդուլ Համիդը, թե ինչպես նրան պիտի 10-20-հազարանոց զորք տային, քանզի ինքը՝ Դաշնակցությունը, իր ստեղծման օրից հետապնդված և հալածված էր հենց ռուսական իշխանությունների կողմից, և առաջին հերթին ցարական քաղաքականությունն էր խոչընդոտում հայ կամավորական շարժմանը:

Վառ երևակայության տեր, աշխատասեր շինական Ուստա Կարոն, որ ողջ կյանքը տարբեր գյուղերում կառույցներ է արել, աշխատանքով հեղինակություն ու բարի անուն վաստակել, փոխում է իր կյանքի հունը՝ վերջերս ծանոթացած ՀՅԴ պրոպագանդիստ շրջիկ Կայծակի (այս կերպարի նախահիմքը Իսահակյանի սիրելի ընկեր Նիկոլ Աղբալյանն է) կրակոտ ու հայրենաշունչ ճառերի ազդեցության ներքո: Երբ նա իմանում է ճշմարտությունը Արևմտահայաստանի օրհասական վիճակի մասին, ինչպես և լսելով Երկրից գաղթած ռես Հոսեի պատմությունները՝ թուրքերի կատաբառ ջարդերի վերաբերյալ, Ուստա Կարոն (որը չուներ կին և երեխա) որոշում է զինվորագրվել ՀՅԴ-ի հրովարտական Արևմտյան Հայաստանի ազատագրման գործին: Սակայն ոչ որպես հասարակ զինվոր կամ տասնապետ, այլ հայոց զորքի երամանատար, մի նոր Անդրանիկ գորավար, և երբ փորձում է իր այդ երազային նպատակներն իրականացնել, բնականաբար, բախվում է իր շրջապատի հետ: Ընկնում է հակասության մեջ այն ուժերի հետ, որոնց օգնությամբ կարծում էր, թե պիտի բազմահազար զորք հավաքի: Սակայն Կարսի ՀՅԴ պատասխանատուն՝ Պր թագավորը, փոխանակ մարդկային ձևով բացատրելով Ուստա Կարոյին իր նախաձեռնածի անհնարինության մասին, մեծամտաբար ճամփա է գցում նրան և հետևից էլ դեռ մի ծաղրական նամակ ուղարկում... Ինչպես տեսնում ենք,

Ուստա Կարոյի մոտեցումը պատմությանը, հայ-թուրքական հնարավոր պատերազմին, Սուլթանին գահընկեց անելու գաղափարին զուտ դոնկի-խոտյան ծրագրեր են, և ավելի շատ ռոմանտիկ մարդու երազանքներ՝ հեռու, շատ հեռու իրականությունից:

Այս կոլիզիան, բնականաբար, բոլորից լավ հասկացել էր ինքը Իսահակյանը՝ 23 տարեկանից կյանքը Դաշնակցության գործունեության հետ կապած բանաստեղծ-քաղաքական գործիչը: Ահա ինչ է գրում նա իր հերոսի կապակցությամբ. «Հայ ժողովրդի տառապանքը, Հայաստանի ազատելը նրա մեջ վառում է քաջություն... նա հոգեպես պատրաստ է կռվել, զոհվել, բայց չի ճանաչում իրականությունը, որոշում է բանակ կազմել, մեծ ուժ է ուզում, երկիր մտնի, կռվի, ազատի, բայց նրան ոչ ոք ուժ չէր կարող տալ, այդքան գորքը հայը չի կարող տալ: Տվածը մի 100 կամ 200 մարդ է, մի խումբ: Դրանով Ուստան ի՞նչ կարող է անել: Ո՛չ նա է ճանաչում իրականությունը և ո՛չ էլ Դաշնակցությունը: Երկուսն էլ ֆանտազորներ են, երկուսն էլ Ուստա Կարոներ»: Ահա այս բնույթի հերոսի է առաջ քաշում Իսահակյանը, որի մոտեցումը պատմական իրադարձություններին էպոսատիպ է, չափազանցված, ֆանտասմագորիկ, օրինակ՝ Ուստային թվում է, թե ինքը կզցի, սրախտղխտղ կանի թուրքաց Սուլթանին ճիշտ այնպես, ինչպես Սասունցի Դավիթը՝ Մարա Մելիքին: Ջուտ էպիկական բնույթի է և Ուստայի ռոմանտիկ, մեծ երազանքը՝ բերդ կառուցել Մասիսի կատարին և Սուլթանին այնտեղից ոչնչացնել... Ի՞նչ խոսք, գաղափարն ինքնին վեհ է և ազնիվ, սակայն այն շատ և շատ հեռու էր իրագործումից: Այլ բան է, եթե հայրենասիրական այս շիկացումը հատուկ լիներ բոլորին, եթե այդպես մտածեին բոլոր հայ քաղաքական ուժերը և, վերջապես, ողջ հայ ժողովուրդը՝ և՛ արևելահայ, և՛ արևմտահայ - ահա այն ժամանակ ազատագրման գաղափարը միս և արյուն կառներ, այսինքն՝ դա կլիներ համաժողովրդական ընդվզում, համաժողովրդական զինյալ ապստամբություն: Մոտավորապես նման համընդհանուր ելույթի, ընդվզման կոչ է անում Իսահակյանի դեռևս 1890-ական թթ. գրած «Մարսա Մանուկը» պոեմի հերոսը, բայց դա դիցաբանություն էր, իսկ սա՝ իրատեսական վեպ, թեև հագեցած էպոսատիպ տարրերով:

Իսահակյանը խորհրդանշական ձևով այն միտքն է առաջ քաշում, որ Հայաստանի ազատագրումը հնարավոր կլիներ, եթե «ամեն մի հայ փոքր-ինչ Ուստա Կարո լիներ», այսինքն՝ պատրաստ լիներ անձնագո-հության, պատրաստ լիներ լքել տուն-տեղ, հարազատներ, աշխատանք, սիրած էակին, ինչքան էլ նա թանկ լիներ, ինչպես որ ասում է Ուստա Կարոն իր սիրածի առնչությամբ. «Քառասուն հազար Մանամ յար չեն փոխի Հայաստանի մի թիզ հողի հետ»:

Իսահակյանը հրաշալի հասկանում էր, որ կերտելով հայկական Դոն Կիխոտի կերպարը՝ նա չի փոխի պատմության ընթացքը, քանզի նրա

հերոսը ո՛չ կուսակցական առաջնորդ էր, ասեմք, ինչպիսին էր Սիմոն Զավարյանը, և ո՛չ հերոս հայդուկապետ էր, ինչպես Աղբյուր Մերոբը, այլ պարզ և արդարամիտ մի շինական էր, որը, սակայն, հասկացել էր, որ այլևս այսպես ապրել հնարավոր չէ, երբ հայրենիքիդ մի հատվածում ջարդ է ու կոտորած. հայը, ուր էլ որ ինքը գտնվի, պետք է իրեն զգա իր երկրի տերը, և զենք վերցնի, և կյանքը նվիրաբերի Հայաստանի ազատագրման սուրբ գործին: Եթե ազգը կազմված լիներ Ոստա Կարոններից, նրա ճակատագիրը այլ կլիներ...

* * *

Զարմանալի է ճակատագիրը այս վեսի. չէ՞ որ կարող էր այնպես լինել, որ 1913-1914 թթ. Իսահակյանը այն տպագրեր, քանզի վեսյն ավարտված էր, ձեռագիրը բանաստեղծի մոտ էր, և կարող էր տպագրել հենց Ժնևում՝ «Դրոշակի» խմբագրության տպարանում, որտեղ ցարական գրաքննության արգելափակող հանգամանքները չկային: Եվ դեռ հեռու էին թե՛ Առաջին համաշխարհային պատերազմը և թե 1915 թվականի հայոց ողբերգությունը:

Հեռու չէր պահը, որ բանաստեղծը առաջին անմիջական պոռթկումից հետո իր համար անսովոր էպիկական ժանրով գրած երկը հրապարակ հաներ:

Եվ այնժամ դեռևս 90 տարի առաջ ստեղծած գրական կոթողը կլիներ հայ արձակի սեփականությունը: Եվ հայ ընթերցողի քանի՜-քանի սերունդներ այդ բարձրարվեստ երկի հետ շփման հազվագյուտ պահեր կունենային: Եվ դեռ չենք խոսում այն վիթխարի հայրենասիրական ավանդների մասին, որն իր մեջ կրում է «Ոստա Կարո» վեսյը, և որոնց ներգործությունը երիտասարդ սերնդի վրա անառարկելի կլիներ: Միայն թե վեսյը Իսահակյանը տպագրեր... Ուղիղ 95 տարի է անցել վեսյի ստեղծումից, բանաստեղծի մահից հետո էլ՝ դեռևս կես դար, սակայն «Ոստա Կարոն» մնաց անտիպ վիճակում: Հայ ընթերցողի գիտակցության մեջ անգամ ձևավորվել է միտքը, որ «Ոստա Կարոն» մնաց անավարտ:

Իսահակյանը շատ էր սիրում իր վեսյը, գուցե տարիների աշխատանքը, թափված ջանքերը այն արավել հարազատ էին իրեն դարձրել, ինչպես ինքն է խոստովանում նամակներից մեկում. «Վենետիկ, 10 դեկտեմբեր <1925>. «Ոստա Կարոն»՝ շատ հետաքրքրական է... Իմ տեսլի մեջ նշանավոր վեսյ է լինելու: Բայց ո՞վ գիտե, ազատվե՞լ էլ իր ծագը սիրում է՝ ամենից սիրումը համարելով: Բայց ես հավատացած եմ: Միայն մեծ է դուրս գալու: Ելուպեա: Մոտ 700-800 էջ է, Բաֆֆիի «Մամվելի» չափ» (ԱԽՆ, 50):

Նա այնքան էր վարժվել իր վեպին, որ կյանքն առանց դրա այլևս չէր պատկերացնում: Վեպը տարիների ընթացքում որպես մի չմարած հրաբուխ անընդհատ եփվում էր, ընդլայնվում, ուռճանում, դուրս գալիս հեղինակի վերահսկումից: Նա, մանավանդ վերջին տարիներին, արդեն աշխատում էր ոչ թե վեպի գլուխները միահյուսելու, տրամաբանական ավարտի բերելու ուղղությամբ, այլ գրում էր իր մտորումը, ապրումը, թախիծը, վերհուշը, անցյալի մի դրվագը, տեսարանը, երևակայական մի պատկերը, տեսիլը, սուտը, հնարածը, երազը, անուրջը և այս ամենը՝ որպես մի մասնիկը «Ուստա Կարոյի», գրի առնում և հանձնում իր վեպ-օվկիանին, ինչպես բոլոր մեծ ու փոքր գետերը դեպի օվկիանոս են գնում... Արդյունքում ստացվում էր, որ «Ուստա Կարոյի» անվան տակ ստեղծվում էր մի յուրահատուկ ինքնազդմանկար, ինքնակենսագրություն, ինքնապատում, վեպ վեպի մեջ: Եվ հեղինակը արտացոլվում էր իր հերոսի կերպարի մեջ, տարիների ընթացքում զարմանալի կերպով նույնանում նրա հետ. Ուստա Կարոն և նաև որոշակի իմաստով Օրբե Հարութը, Խսահակյանի մարդկային խառնվածքի երկփեղկված մասերն են, նրա alter ego-ն՝ կրկնակի արտացոլումով:

Միայն ձեռագրերի թիվը, հաշվի առնելով վեպի առաջին բնագիրը, մշակված ու չմշակված գլուխները երկրորդ տարբերակի, և վեպի շուրջ գրված նյութերը՝ առանձին գրառումներ, տետրեր, ծոցատետրեր, նոթեր, իրենց ամբողջությամբ կազմում են բանաստեղծի արխիվի զգալի մասը: Մենք հրաշալի գիտակցում ենք, որ բանաստեղծի սրտի ուզած ձևով վեպը չէր ավարտվելու, մանավանդ Խորհրդային Հայաստան գալուց հետո: Իր հերթին պատմությունն էլ բարենպաստ չեղավ հայի համար... Մակայն բանաստեղծի գրույցն ինքն իր հետ շարունակվելու էր «Ուստա Կարո» վեպի ձևով: Մի՞թե այս վեպը չէր նրա վերջին ապաստարանը, նրա՝ միայն իրեն պատկանող «հուշերի այգին», նրա միակ խոստովանատեղը և ստեղծագործողի վերջին հանգրվանը...

Եվ սակայն ինքը՝ Խսահակյանը, լավ գիտեր իմաստուն ասացվածքի ճշմարտությունը. «Ձեռագրերը չեն այրվում»: Չուզենալով, թե ուղղակի մարդկայնորեն ի վիճակի չլինելով ավարտել վեպի երկրորդ տարբերակը, նա մինչև իսկ տարիներ առաջ չուզեց, մինչև իր պահանջներին համապատասխան կատարյալին չհասցրած, բյուրեղացրած ձևով հրապարակ հանել փաստորեն ավարտված վեպի առաջին տարբերակը՝ աշդպես էլ գրկելով իր հազարավոր հին ու նոր ընթերցողներին «Ուստա Կարոն» ընթերցելու բերկրանքից... Բայց այդ իրավունքը ուներ միայն ինքը՝ մեծ Վարպետը: Զանգի վեպը դարձել էր նրա անձնական երջանկության միակ աղբյուրը, որ հարատև բերկրանք էր պատճառում իր ստեղծողին: Ահա թե ինչ էր գրում Խսահակյանը դեռևս Վենետիկում, 1924 թ. հոկտեմբերի 3-ին. «Այստեղ սկսվել են խոնավ և տխուր օրերը, բայց ինձ համար արև է տաք

ու պայծառ, որովհետև միայն ստամոքսով (ներողություն անքաղաքավարությամբ) եմ կապված իրական աշխարհի հետ, ամբողջապես վեպիս հերոսներին հետ եմ, մեր արևին մոտիկ Հայաստանում, լսում եմ զանգակ աղբյուրների ձայնը, զգում եմ լեռների ծաղիկների բույրը և ապրում եմ հին, լավ օրերս: Իմ Ուստա Կարոն ասում է, թե «արևը աղքատի վերարկուն է», իսկ իմ վեսյս - իմ կյանքս ու սերս ու մեծադիր հաճույքս: Չմախանձիր ու աչքով չտաք» (ԱԻՆ, 27):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անտիք Իսահակեանի նամակները,- Գահիրե, տպարան «Յուսսեր», 1959, էջ 114: Հետագայում՝ ԱԻՆ եւ համապատասխան էջը:
2. Անտիք Իսահակեան, Նամակներ ՀՀ. Բ. Պիլեզիկճեանին, Ն. Ալիմեանին, Սիմոն Յակոբեանին (հրատ. Մ. Սիմասեան), Ժնև, 1996, էջ 45:
3. Նույն տեղում, էջ 67:
4. Նույն տեղում, էջ 69:
5. Նույն տեղում, էջ 73: